



168. ԴԱՐՁԻՆ

Ընհմ ա ընհմ, մին գարգի յա ընհմ: Էս գարգին վեր ված-
ծուն տրեկանը թմամում ա, քշերը թաղմը մին ծառ ա տեսնում և
էտ ծառեն լրն տեսնում ա հինչքան շորեր ա կարալ և էտ կարած
շորերան հինչքան կտոր ա կյուղացալ, լոխ էտ ծառան կախ-կախ
ըրած: Դարգին վախում ա և մթկումը մտածում.— Զնլրնթ մծացալ
ըմ, աստված ինձ սալաղլամիշ ա անում, վեր էլ շոր կրելիս նըես-
տա կյուղանամ վեշ:

Դարգին տղեն առավոտը արագը նաղլ ա անում և ասում.—
Բա՛լա, վեր մին էլ մնշտմրի կտոր պիրի շոր կրելու համար, տու
ինձ կասիս՝ ա՛պա, ծառը:

Մին էրկու օրանը ետը մին հարուստ խոջա մարթ մին լնվ
ճոթ ա պնդում և խնթրում, վեր ուրան հետե մին շոխա, մին
շալվար և մին պինճակ կարել տա: Դարգին վեր ճոթը աշկն ա
ըղնում, աշկերը ծիլի-վիլի յա անում: Մին պատառ թաքուն կըտ-
րում ա, կոխում գլմբին տակը: Տղեն աշկապն ա ըղնում, վեր
հարը կտորը կտրից, կոխից գլմբին տակը, ասից՝ ա՛պա, ծառը:
Զնրը բադասխանում ա տղեն.— Բա՛լա, սուա, էտ կտորան ծառեն
ըլնլ լի: